Փոքր չափի դրամաշնորհային ծրագրերի հրավեր

«Կանանց նախաձեռնություն հանուն անվտանգության և հավասարության» (WISE) ծրագիրը նպատակ ունի փոքր դրամաշնորհներ տրամադրել կանանց կողմից ղեկավարվող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (այսուհետ նաև ՔՀԿ), համայնքային կազմակերպություններին և/կամ այն կազմակերպություններին, որոնք կենտրոնացած են կանանց, աղջիկների և խոցելի խմբերի հիմնախնդիրների և տնտեսական զարգացման վրա՝ մասնավորապես նպատակաուղղված լինելով թիրախային համայնքներում կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և բռնի ծայրահեղականության դեմ պայքարին և կանխարգելմանը:
«Կանանց նախաձեռնություն հանուն անվտանգության և հավասարության» (WISE) ծրագիրը աջակցվում է Միացյալ Նահանգների պետքարտուղարության կողմից և իրականացվում է Mercy Corps Georgia-ի կողմից՝ Հայաստանում համագործակցելով «Իմփակտ ինովացիաների ինսիտուտի նախաձեռնություններ» հիմնադրամի (IMINI) հետ: Ծրագիրը նպատակ ունի աջակցել այն համայնքին, որն աշխատում է ի պաշտպանություն կանանց իրավունքների և բարձրացնում է իրազեկվածությունը կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և բռնի ծայրահեղականության դեմ պայքարի վերաբերյալ, ինչպես նաև բացահայտում և արձագանքում է բռնության տարբեր ձևերին, որոնք բացասաբար են անդրադառնում գենդերային հավասարության և ներառական, ժողովրդավարական հասարակության ձևավորման վրա:

«Իմփակտ ինովացիաների ինսիտուտի նախաձեռնություններ» հիմնադրամը սույն հրավերով հայտարարում է մրցույթ 3 փոքր դրամաշնորհային ծրագրերի համար՝ յուրաքանչյուրը մինչև 570,000 ՀՀ դրամի չափով:

Ծրագրի նկարագիրը՝

Ծրագիրը խրախուսում է ՔՀԿ-ներին և քաղաքացիական շարժումներին/նախաձեռնություններին՝ դիմելու Հայաստանում անցկացվող բաց, արժանիքների վրա հիմնված մրցույթին, որի թիրախը հանդիսանում է կանանց և աղջիկների նկատմամբ բռնության հիմնախնդիրների դեմ պայքարը:
Ներկայացվող ծրագրերը կարող են ունենալ հետևյալ ուղղվածությունները՝

- Կրթության, վերապատրաստման և հմտությունների զարգացման ծրագրեր թիրախային համայնքների, դպրոցների և ՄԿՈՒ հաստատությունների համար, որոնք դասընթացներ և վերապատրաստման ծրագրեր են առաջարկում ուսանողներին, դպրոցներին և ՄԿՈՒ ուսուցիչներին:
- Սոցիալական և զանգվածային լրատվամիջոցների արշավներ՝ օգտագործելով տեղական ռեսուրսներ՝ հիմնախնդիրներին ավելի խորը անդրադառնալու, իրազեկվածության

բարձրացման և համայնքներում կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ պայքարելու համար:
- Աշխատանք տեղական ինքնակառավարման մարմինների հետ և համագործակցություն համայնքի ՔՀԿ-ների և քաղաքապետարանների միջև՝ նախաձեռնելու և կյանքի կոչելու կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը և բռնի ծայրահեղականությանը արձագանքելու ավելի արդյունավետ մեխանիզմներ:

ՔՀԿ-ները ներկայացվող ծրագրերով պետք է ձգտեն ընդգրկել իրենց՝ իրազեկման բարձրացմանն ուղղված գաղափարները Հայաստանում «16-օրյա ակտիվիզմի» (“16 days of activism”) քարոզարշավի մեջ: ՔՀԿ-ների կողմից «Իմփակտ ինովացիաների ինսիտուտի նախաձեռնություններ» հիմնադրամին եզրափակիչ հաշվետվության ներկայացման վերջնաժամկետն է 2023 թվականի հունվարի 15-ը:

Ովքեր կարող են դիմել՝

- Հայաստանի օրենսդրության համաձայն դրամաշնորհներ կարող են տրվել միայն գրանցված կազմակերպություններին, հետևաբար անհատական հայտերը չեն ընդունվում:
- Կարող են դիմել հասարակական կազմակերպությունները, հանրային և պետության կողմից վերահսկվող մասնագիտական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև Հայաստանի միջնակարգ կրթության հանրային և պետական ուսումնական հաստատությունները:
- Ակտիվիստների ինքնակազմակերպված խմբերը, որոնք նպատակ ունեն ստեղծել հասարակական կազմակերպություն կամ ներգրավվել և միանալ արդեն գործող որևէ հասարակական կազմակերպության: Պետք է ունենան առնվազն 6 ամսվա ապացուցված ակտիվության փորձ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում:
- Դիմող կազմակերպության աշխատակիցների 70%-ը պետք է լինեն կանայք
- Դիմորդ կազմակերպությունները պետք է լինեն շահույթ չհետապնդող
- Դիմորդ կազմակերպությունը պետք է ունենա ընտրված ոլորտում 6 ամսից ավելի աշխատանքային փորձ
- Փոքրամասշտաբ նախագծի տևողությունը չպետք է գերազանցի 3 ամիսը:
- Ծրագրի դիմորդները պետք է լինեն 18 տարին լրացած
- Ծրագիրը պետք է հիմնված լինի և իրականացվի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում: Ծրագրի ընթացքում ընտրված դրամաշնորհառուները հասանելիություն կունենան ք. Գյումրիի «Իմփակտ ինովացիաների ինսիտուտի նախաձեռնություններ» հիմնադրամի գրասենյակին և համակարգիչներին՝ աշխատելու և ծրագրի շրջանակում միջոցառումներ իրականացնելու համար:

Առաջնահերթությունը կտրվի այն թեկնածուներին, ովքեր կհամագործակցեն տեղական կամ ազգային մակարդակով պետական և հասարակական կազմակերպությունների հետ տարածաշրջանային զարգացման, կրթության, նորարարության, մշակույթի, առողջապահության, կոնֆլիկտների կարգավորման և/կամ շրջակա միջավայրի պահպանության համար, ինչպես նաև կհամագործակցեն միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ:

Սահմանափակումներ.

- Գործառնական/սարքավորումների ծախսեր- Դրամական միջոցները չեն կարող օգտագործվել գործառնական/սարքավորումների ծախսերի համար (օրինակ՝ գրասենյակի վարձույթ, կոմունալ ծառայություններ)
- Մի վնասիր - Դրամական միջոցները չեն կարող օգտագործվել որևէ գործունեության համար, որը կարող է վնաս պատճառել շահառուների որևէ խմբի կամ շրջակա միջավայրին:
- Անհատական կրթաթոշակներ կամ անձնական կրթաթոշակներ -Դրամաշնորհները չեն կարող օգտագործվել անհատներին անձնական օգտագործման համար ուղղակի ֆինանսական աջակցություն կամ կրթաթոշակներ տրամադրելու համար:
- Կրոնական կամ քաղաքական գործունեություն - դրամաշնորհը չի կարող օգտագործվել կրոնական գործունեության ֆինանսավորման կամ հատուկ կրոնական կամ քաղաքական համոզմունքների խթանման համար:

Ինչպես մասնակցել.

Մրցույթին մասնակցելու համար շահագրգիռ ՀԿ-ները և համայնքային կազմակերպությունները պետք է՝

- Լրացնեն, ստորագրեն և ներկայացնեն էլեկտրոնային հայտը
- Տրամադրեն տեղեկատվություն դիմող կազմակերպության և անհատների/մարդկանց խմբերի մասին, ովքեր մասնակցում են փոքրամաշտաբ դրամաշնորհային ծրագրին: (ռեզյումե, աշխատանքի նկարագիր):
- Համաֆինանսավորման դեպքում, տրամադրեն համաֆինանսավորողի, հովանավորի և գործընկեր կազմակերպության/ների և վերոնշյալ կազմակերպությունների նախագծում ներգրավվածության մասին տեղեկություններ:
- Տրամադրեն այլ փաստաթղթեր, որոնք կարող են վերաբերել հայտին և օգնել ծրագրի վերաբերյալ իրազեկ որոշումների կայացմանը:

Հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով WISEGrants@mercycorps.org էլ-փոստի հասցեով: Փոքր մաշտաբի դրամաշնորհային ծրագրի հայտը հասանելի է safeyou.space կայքում:
Ներկայացված հայտերը չպետք է գերազանցեն 20 ՄԲ-ը, էլ-նամակի վերնագիր դաշտում պարտադիր պետք է նշվի «The SSG Application 2023 Armenia» :

Ժամկետներ.

- Էլեկտրոնային հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային փոստի միջոցով WISEGrants@mercycorps հայերեն կամ անգլերեն լեզուներով 2023 թվականի հուլիսի 21-ից սեպտեմբերի 11-ը ընկած ժամանակահատվածում: Վերջնաժամկետից հետո ներկայացված Հայտերը ենթակա չեն դիտարկման:
- Ներկայացված հայտերի վերանայումն ու ընտրությունը կավարտվի 2023 թվականի սեպտեմբերի 25-ին:
- Դրամաշնորհառուների համար կառաջարկվի տեղեկատվական հանդիպում 2023 թվականի հոկտեմբերի 2-ին:
- Կողմերի միջև վերջնական դրամաշնորհային պայմանագրերը կկնքվեն 2023 թվականի հոկտեմբերի 9-ին՝ Գյումրիում ծրագրի պաշտոնական մեկնարկի ժամանակ: